# ՆԵՏԱԿԻՄԱԲ

## Ենթամաշկային ներարկման կատարման տեխնիկա

(Անիմացիոն ապրանքանիշ «նեկատիմաբ»)



Նախալիցքավորված ներարկիչները պարզ և ծանոթ տեխնոլոգիա է դեղի ենթամաշկային ներարկման համար՝ պահպանման հարմար ձևաչափով:
Այն կարելի է հեշտությամբ սովորեցնել բուժառուներին՝ միաժամանակ վստահ լինելով հաջող ներարկման մեջ:



Մի թափահարեք ներարկիչը:




Մի թափահարեք ներարկիչը: Ուշադրություն դարձրեք ներարկիչի սարքին, խորհուրդ չի տրվում հեռացնել կափարիչը ներարկման նախապատրաստման փուլում:
Միայն դեղի ընդունումից անմիջապես առաջ



Նախքան ենթամաշկային ներարկում կատարելը,
ձեռքերը մանրակրկիտ լվացեք օճառով և ջրով:



Փաթեթավորումից հանեք երկու ներարկիչները: Զննեք դրանք:
Ստուգեք պիտանելիության ժամկետը փաթեթի վրա նշված մակնշման համաձայն, գնահատեք ներարկիչների ամբողջականությունը և լուծույթի վիճակը:
(Ներարկիչները դուրս են սահում փաթեթավորումից)



Փաթեթավորումից հանեք երկու ներարկիչները: Զննեք դրանք:
Ստուգեք պիտանելիության ժամկետը փաթեթի վրա նշված մակնշման համաձայն, գնահատեք ավտոներարկիչների ամբողջականությունը և լուծույթի վիճակը:
(Ներարկիչները դուրս են սահում փաթեթավորումից)




Մի օգտագործեք ներարկիչը վնասվածքի դեպքում, ժամկետանց
լինելու կամ լուծույթի փոխված վիճակի դեպքում:






Ներարկելուց առաջ ներարկիչները պետք է բերվեն սենյակային ջերմաստիճանի:
Ներարկիչները թողեք մաքուր մակերեսի վրա սենյակային ջերմաստիճանում 25-30 րոպե:



Ներարկիչները չպետք է տաքացնել այլ եղանակներով
(Լույսերը դողում են, գոլորշին շարժվում է, ավտոներարկիչը իջնում է կաթսայի մոտ վերևից)



Ներարկիչները չպետք է տաքացնել այլ եղանակներով
(Պատկերը ջնջվում է)



Ընտրեք ներարկման տեղը՝ դա կարող է լինել որովայնի պատի հատվածը պորտից առնվազն 5 սմ հեռավորությամբ, ազդրի առջևի և կողային մակերեսները, ինչպես նաև ուսի արտաքին մասի միջին երրորդ հատվածը:



Ներարկման տեղը մշակեք սպիրտային անձեռոցիկով/բամբակով շրջանաձև շարժումներով:.
Օգտագործելուց առաջ ներարկիչները չի կարելի թափահարել:
(անձեռոցիկով /բամբակով ձեռքը շարժվում է շրջանագծով)



Մաշկը մշակելուց հետո զգուշորեն հանեք կափարիչը ասեղից՝
առանց ասեղին դիպչելու և խուսափելով այլ մակերեսների հետ շփումից :



Օգտագործելով մի ձեռքի բթամատը և
ցուցամատը՝ բռնեք մշակված մաշկը ծալքի մեջ:
(Ձախ ձեռքը մի փոքր բարձրանում է):



Մյուս ձեռքում վերցրեք ներարկիչը՝
այն պահելով աստիճանավորված մակերեսով
դեպի վեր։




Դեղը ներարկվում է մաշկի մակերեսի նկատմամբ 45 կամ 90 աստիճան անկյան տակ՝ կախված դրա հաստությունից և ենթամաշկային ճարպային շերտի արտահայտվածությունից:

(նիհար բուժառուների դեպքում դեղը պետք է ներարկվի 45 աստիճանի անկյան տակ, իսկ 1,5 սմ-ից ավելի մաշկի ծալքի հաստությամբ բուժառուների դեպքում թույլատրելի է 90 աստիճան անկյան տակ ներարկումը):



Մեկ արագ շարժումով ասեղն ամբողջությամբ մտցրեք մաշկի ծալքի մեջ:
Ասեղը մտցնելուց հետո բաց թողեք մաշկի ծալքը:




Ներարկեք ամբողջ լուծույթը դանդաղ, մշտական ճնշմամբ
ներարկիչի մխոցի վրա 2-5 վայրկյանների ընթացքում:




Երբ ներարկիչը դատարկվի, հեռացրեք ասեղը մաշկից նույն անկյան տակ:



Ներարկումից հետո չոր, ստերիլ անձեռոցիկով կամ բամբակով թեթև սեղմեք ներարկման տեղը՝ առանց մաշկը մերսելու:
Ներարկման տեղից կարող է փոքր քանակությամբ արյուն դուրս գալ:
(անձեռոցիկով կամ բամբակով ձեռքը իջնում է վերևից ներքև և կանգ է առնում)



Անհրաժեշտության դեպքում օգտագործեք սպեղանի։



Նույն կերպ ներարկեք դեղի երկրորդ դեղաչափը: Նախընտրելի է նույն անատոմիական հատվածը, բայց նախորդ ներարկման տեղից առնվազն 5 սմ հեռու:
Երկու ներարկումների համար պահանջվող ժամանակը չպետք է գերազանցի 10 րոպեն:
(Հայտնվում է երկրորդ ներարկիչը):



Նույն կերպ ներարկեք դեղի երկրորդ դեղաչափը: Նախընտրելի է ընտրել
նույն անատոմիական հատվածը, բայց նախորդ ներարկման տեղից առնվազն 5 սմ հեռու:
Երկու ներարկումների համար պահանջվող ժամանակը չպետք է գերազանցի 10 րոպեն:
(Յայտնվում է երկրորդ ներարկիչը):



Ներարկիչը մեկանգամյա օգտագործման համար է: Մի՛ օգտագործեք այն կրկնակի:
(Ձեռքը մոտեցվում է դույլին):



Թույլ մի՛ տվեք օգտագործված ներարկիչների պահպանումը երեխաների համար մատչելի վայրերում:
(Հայտնվում է «Երեխաներ» նշանը, այնուհետև ջնջվում է):



Ենթամաշկային ներարկում կատարելու մանրամասն տեխնիկան նկարագրված է
դեղի օգտագործման հրահանգում (ներդիր թերթիկում):
Հարմարավետություն և անվտանգություն ենթամաշկային ներարկման ժամանակ:
(Հրահանգը բացվում է):



Ենթամաշկային ներարկում կատարելու մանրամասն տեխնիկան նկարագրված է դեղի օգտագործման հրահանգում (ներդիր թերթիկում): Յարմարավետություն և անվտանգություն ենթամաշկային ներարկման ժամանակ:
(Յրահանգը բացվում է):



Ենթամաշկային ներարկում կատարելու մանրամասն տեխնիկան նկարագրված է դեղի օգտագործման հրահանգում (ներդիր թերթիկում):
Հարմարավետություն և անվտանգություն ենթամաշկային ներարկման ժամանակ:
(Հրահանգների ծալման տեղերը պետք է անհետանան, դրանք բաժանում են նկարազարդումը: Կարող է հեռացվել դեպի թղթի եզրերը):